## «ՇԿ» ՄԱԿՆԻՇԻ ԹԵՐԹԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

| No Ը / Հ | ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՄԱԿՆԻՇԸ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | «ՇԿ» ՄԱԿՆԻՇԻ ԹԵՐԹԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ, ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | ՇԿ - 1 |
| 2 | ՄԱՄՆԱՇԵՆՔԵՐԻ ՄԱԿՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՍԽԵՄԱ - ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՇԿ - 2 |
| 3 | No 3 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՔԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՇԱՊԻԿՆԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՇԿ - 3 |
| 4 | No 3 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՊԱՏԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ 1.50 ՆԻՇԻ ՎՐԱ - ՈՒԺԵՂԱՑՈՒՄ | ՇԿ - 4 |
| 5 | No 3 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՊԱՏԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ 4.50 ՆԻՇԻ ՎՐԱ - ՈՒԺԵՂԱՑՈՒՄ | ՇԿ - 5 |
| 6 | No 3 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ Ա - Ա, Բ - Բ | ՇԿ - 6 |
| 7 | No 4 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՊԱՏԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԻ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՇԿ - 7 |
| 8 | No 4 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՊԱՏԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ 1.50 ՆԻՇԻ ՎՐԱ - ՈՒԺԵՂԱՑՈՒՄ | ՇԿ - 8 |
| 9 | No 4 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԿՏՐՎԱԾՔ Գ - Գ | ՇԿ - 9 |
| 10 | ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ «A», «B» - ՊԱՏԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԻՄՔԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՇԱՊԻԿՆԵՐԻ ՈՒՂՂԱՁԻԳ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ | ՇԿ - 10 |
| 11 | ՀԻՄՔԵՐ Հմ - 1, Հմ - 1Ա, Հմ - 2, ՍՅՈՒՆԵՐ Սն - 1, Սն - 1Ա, Սն - 2, ՀԻՄՔԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ Ե/Բ ՇԱՊԻԿ ՀՈւ - 1, ԿՏՐՎԱԾՔ 1 - 1. ԱՄՐԱՆԻ ԿՑՎԱՆՔՆԵՐ, ՏԱՓՕՂԱԿԻ ԱՄՐԱԿՑՈՒՄ ԱՄՐԱՆԻ ՀԵՏ | ՇԿ - 11 |
| 12 | Սն - 1, Սն - 1Ա, Սն - 2 ՍՅՈՒՆԵՐԻ, ՀՈւ - 2, Շպ - 1, Շպ - 1Ա, Շպ - 2 ՇԱՊԻԿՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ 2 - 2... 5 - 5 ԵՎ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ «C»... «E» | ՇԿ - 12 |
| 13 | Սն - 2 ՍՅԱՆ, Շպ - 2 ՇԱՊԻԿԻ ԿՏՐՎԱԾՔ 6 - 6, ՄԻՋՆԱՊԱՏԵՐԻ ԵՎ ՊԱՏԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ «F»... «H», ՄԻՋՆԱՊԱՏԻ ԼԱՅՆԱՑՈՒՄ Մ - 2 | ՇԿ - 13 |
| 14 | ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ «H», «J», «K» | ՇԿ - 14 |
| 15 | ՀՀ - 1 ՀԻՄՆԱՀԵԾԱՆԻ, ՄՊ - 1, ՄՊ - 2 ՄԻԱՁՈՒՅԼ Ե/Բ ՊԱՐՁՈՒՆԱԿԵՐԻ ՓՌ- ՎԱԾՔՆԵՐ, ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ «L», «M», «R» | ՇԿ - 15 |
| 16 | No 3 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ԾԱԾԿԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ «ԾՈՒ - 1» ՄԻԱՁՈՒՅԼ Ե/Բ ԿՈՂԱՎՈՐ ՍԱԼԻ ԼԱՅՆԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔ, ԾՈւ - 1... ԾՈւ - 3-Ի ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ «N», «O», «P», «Q» | ՇԿ - 16 |
| 17 | No 4 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՔԵՐ Հմ - 3, Հմ - 3Ա, Հմ - 4, ՀԻՄՔԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ Ե/Բ ՇԱՊԻԿՆԵՐ ՀՈւ - 3, ՀՈւ - 4, ՍՅՈՒՆԵՐ Սն - 3, Սն - 4, Սն - 5 | ՇԿ - 17 |
| 18 | Սն - 3 ՍՅԱՆ, ՀՈւ - 3, Շպ - 5, Շպ - 5Ա ՇԱՊԻԿՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ 1 - 1... 4 - 4 | ՇԿ - 18 |
| 19 | Սն - 3 ՍՅԱՆ ԵՎ Շպ - 5Ա ՇԱՊԻԿԻ ԿՏՐՎԱԾՔ 4 - 4, Սն - 4, Սն - 5 ՍՅՈՒՆԵՐԻ ԵՎ ՀՈւ - 4 ՇԱՊԻԿԻ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ 5 - 5, 6 - 6, Սն - 3 ՍՅԱՆ ԵՎ Շպ - 6 ՇԱՊԻԿԻ ԿՏՐՎԱԾՔ 7 - 7 | ՇԿ - 19 |
| 20 | Սն - 4, Սն - 5 ՍՅՈՒՆԵՐԻ ԵՎ Շպ - 6, Շպ - 7 ՇԱՊԻԿՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔ 8 - 8, Սն - 5 ՍՅԱՆ ԵՎ Շպ - 7 ՇԱՊԻԿԻ ԿՏՐՎԱԾՔՆԵՐ 9 - 9, 10 - 10 | ՇԿ - 20 |
| 21 | ՀԻՄՆԱՀԵԾԱՆ ՀՀ - 2, ՊԱՐՁՈՒՆԱԿ ՄՊ - 3, ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ «S», «T» | ՇԿ - 21 |
| 22 | No 3 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՆԵՐՍԻ ՍԱՆԴՈՒՂՔՆԵՐ ՍՔ - 1, ՍՔ 2. No 4 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՄՈւՏՔԻ ՍԱՆԴՈւՂՔ ՍՔ - 3 | ՇԿ - 22 |
| 23 | No 4 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԵՎ ՄԻՋԱՆՑՔԻ ՄՈւՏՔԵՐԻ ՍՔ - 4, ՍՔ - 5 ՍԱՆԴՈՒՂՔ- ՆԵՐԻ ԿՏՐՎԱԾԾՔՆԵՐ. No 2 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ՄՈւՏՔԵՐԻ ՇՔ - 1 ՇՎԱՔԱՐԱՆՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔ | ՇԿ - 23 |
| 24 | No 3, No 4 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԵՎ ՄԻՋԱՆՑՔԻ ՄՈւՏՔԵՐԻ ՇՔ - 2... ՇՔ - 4 ՇՎԱՔԱՐԱՆՆԵՐԻ ԿՏՐՎԱԾՔ. ՆՈՐ ՊԱՏՇԳԱՄԲԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ «U», «V» | ՇԿ - 24 |
| 25 | ՆՈՐ ՊԱՏՇԳԱՄԲԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ «W», «Y», ԿՏՐՎԱԾՔ 1 - 1 | ՇԿ - 25 |
| 26 | No 2 ՄԱՄՆԱՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՍՔ - 6 ՍԱՆԴՈւՂՔԻ ՍԽԵՄԱ-ՀԱՏԱԿԱ- ԳԻԾ, ԿՏՐՎԱԾՔՆԵՐ, ՀԱՆԳՈՒՅՑ «Ա» | ՇԿ - 26 |
| 27 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 1 | ՇԿ - 27 |
| 28 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 2 | ՇԿ - 28 |
| 29 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 3 | ՇԿ - 29 |
| 30 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 4 | ՇԿ - 30 |
| 31 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 5 | ՇԿ - 31 |
| 32 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 6 | ՇԿ - 32 |
| 33 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 7 | ՇԿ - 33 |
| 34 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 8 | ՇԿ - 34 |
| 35 | ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ - 1 | ՇԿ - 35 |
| 36 | ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ - 2, ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ | ՇԿ - 36 |
| 37 | ՄԱՄՆԱՇԵՆՔԵՐԻ ՊՈՂՊԱՏԵ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ, ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔ- ՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԱՄՆԱԳՐԵՐ | ՇԿ - 37 |
| 38 | ՆՈՐ ՑՊ - 1, ՑՊ - 2 ՑԱՆԿԱՊԱՏԵՐԻ, ԴՊ - 1 ԴԱՐՊԱՍԻ ԵՎ Դ - 1 ԴՌԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ | ՇԿ - 38 |
| 39 | ՑՊ - 1 ՑԱՆԿԱՊԱՏԻ ՓՌՎԱԾՔՆԵՐ, ՑՊ - 2 ՑԱՆԿԱՊԱՏԻ ՓՌՎԱԾՔ «G» - «J» | ՇԿ - 39 |
| 40 | ՑՊ - 2 ՑԱՆԿԱՊԱՏԻ ՓՌՎԱԾՔՆԵՐ «G»... «A» , ԴՊ - 1 ԴԱՐՊԱՍԻ ԵՎ Դ- 1 ԴՌԱՆ ՓՌՎԱԾՔՆԵՐ | ՇԿ - 40 |
| 41 | ՑՊ - 1 ՑԱՆԿԱՊԱՏԻ ՖՐԱԳՄԵՆՏ, ԿՏՐՎԱԾՔՆԵՐ | ՇԿ - 41 |
| 42 | ՑՊ - 2 ՑԱՆԿԱՊԱՏԻ ՖՐԱԳՄԵՆՏ, ԿՏՐՎԱԾՔՆԵՐ. ԴՊ - 1 ԴԱՐՊԱՍԻ ԵՎ Դ - 1 ԴՌԱՆ ԿԵՏԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ Հմ - 7, Հմ - 7Ա, ՀԻՄՆԱԿԱՊ ՀԿ - 1 | ՇԿ - 42 |
| 43 | ԴԱՐՊԱՍ ԴՊ - 1, ԴՈՒՌ Դ - 1 | ՇԿ - 43 |
| 44 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 1 | ՇԿ - 44 |
| 45 | ՆՅՈւԹԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ ՄԵԿ ԿՈՆՍ- ՏՐՈւԿՏԻՎ ՏԱՐՐԻ ՀԱՄԱՐ - 2; ԿՈՆՍՏՐՈւԿՏԻՎ ՏԱՐՐԵՐԻ ՆՅՈւԹԵՐԻ ԸՆՏՐԱՆՔ; ԱՅԼ ՆՅՈւԹԵՐԻ ԵՎ ԱՇԽԱ- ՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՄԱՄՆԱԳԻՐ | ՇԿ - 45 |

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. Վայոց Ձորի մարզի Զառիթափ գյուղի մանկապարտեզի մասնաշենքերի ուժեղացման և հիմնանորոգման տվյալ նախագիծը կատարված է համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող շինարարական նորմաների, նաև համաձայն «ԱՐՍԷԱ» Գիտա-արտադրական ՍՊԸ-ի կողմից տրված Եզրակացության:
2. Համաձայն ՀՀՇՆ II - 2.02 - 2006-ի մանկապարտեզի տեղամասը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտում:
3. Որպես հիմքերի հիմնատակ ծառայում են խոշորաբեկոռային գրունտները, որոնք ըստ սեյսմիկ հատկությունների երկրորդ կարգի են:
4. Մանկապարտեզը ունի երեք երկհարկ, մեկ միահարկ մասնաշենքեր և միջանցք, որոնք բաժանված են դեֆորմացիոն կարաններով: Տվյալ նախագծում նախատեսված է ուժեղացնել No 3 երկհարկ և No 4 միահարկ մասնաշենքերը (համարակալված են ՇԿ - 2 թերթի վրա տրված սխեմա-հատակագծի վրա): No 3 երկհարկ մասնաշենքի «3» և «Ա» առանցքներով արտաքին պատերը ունեն ճաքեր:

Շենքերի կոնստրուկտիվ համակարգը լուծված է խամքարաբետոնե ժապավենային հիմքերի վրա հենված, կանոնավոր ձևի տուֆաքարերի ու կրավազային շաղախի կիրարմամբ 50 և 43 սմ հաստության որմածքից ու ե/բ ներառված տարրերից կազմված կրող երկայնական (մ-ք No 3) կամ լայնական (մ-ք No 4) պատերով և հավաքովի ե/բ բազմանցք սալերից ծածկերով: Կրող պատերին ողղահայաց ներքին կապային պատերը բացակայում են, իսկ նույն ուղղության արտաքին պատերի միջև առանցքային տարածությունը հավասար է 12.8 մ, ինչը զգալիորեն ավել է նորմատիվ 9.0 մ տարածությունից: Ծածկերի սալերի միջև միաձույլ ե/բ հատվածները բացակայում են:

5. Տվյալ նախագծում նախատեսված է վերացնելով վերոնշյալ թերությունները կատարել մանկա- պարտեզի No 3 երկհարկ և No 4 միահարկ մասնաշենքերի ուժեղացման հետևյալ աշխատանքները սեյսմազինվածության ավելացման նպատակով:

5ա. Մասնաշենքերում տեղադրել կապային պատերին փոխարինող նոր, համապատասխան երկհարկ և միահարկ ե/բ շրջանակներ: No 3 մասնաշենքի հիմքերը և պատերը, այդ թվում միջնա- պատերը, ուժեղացնել երկկողմանի ե/բ շապիկներով «3» առանցքով ամբողջությամբ և «Ա»» «Գ» առանցքներով մասամբ, հասցնելով շապիկները մինչև նոր շրջանակի արտաքին պատերին կից սյուները և անցնելով նրանց 1.0 մետրից ոչ պակաս: Ուժեղացնել գոյություն ունեցող (գ. ու.) անվորակ անկյունային ե/բ միջուկը («Գ» և «3» առանցքների հատման տեղում ) եվ լայնացնել ոչ նորմատիվ միջնապատերը:

5բ. Ե/բ շապիկների իրականացումից առաջ հիմքի ժապավենների դատարկամիջությունների մեջ ներարկել մանրախճային ծանր բետոն կամ ց/ա շաղախ, կոնստրուկցիայի հոծությունը ապահովելու նպատակով: Իսկ պատերի վրա ե/բ շապիկների տեղադրումից առաջ նրանցում առկա ճաքերի մեջ ճնշման տակ ներարկել պոլիմերցեմենտային շաղախ, շարվածքի հոծությունն ու ամբողջականու- թյունը ապահովելու նպատակով:

5գ. Քանի որ հոսող ջրերից գ. ու. հիմքերի կրավազային շաղախը ողողվել է և մասամբ քայքայվել, ապա բոլոր չուժեղացվող հիմքերը նախատեսված է բացել, մաքրել, հարթասվաղել ց/ա շաղախով և ջրամեկուսացնել բիտումային մածիկի քսվածքով: Ջրամեկուսացումը նախատեսված է նաև ուժեղաց- վող հիմքերի համար:

5դ. Ուժեղացնել No 3 մասնաշենքի միջհարկային ծածկը վրադիր միաձույլ ե/բ կողավոր սալով, որի կողերը տեղադրվում են բազմանցք սալերի վերևից բացած անցքերի մեջ: Քանի որ շենքերի վրա կառուցված են նոր տանիքներ, վերնածածկերի ուժեղացման փոխարեն իրականացվում է գ. ու. բազմանցք սալերի միջև կարերի մաքրում շինաղբից և ց/ա շաղախի ներարկում այդ կարերի մեջ:

5ե. Կատարել այլ անհրաժեշտ աշխատանքներ:

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ | | | | | |
| | ՏՆՕՐԵՆ | Ռ. ՄԱՆԱՍՅԱՆ | | ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ | ՓՈՒԼ | Ա.Ն. |
| | Ն.Գ.Կ. | Ս. ԱԹՈՅԱՆ | | «ՇԿ» ՄԱԿՆԻՇԻ ԹԵՐԹԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ, ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | ԹՎԱԿԱՆ | 2015 |
| | | | | | ԹԵՐԹԵՐ | |
| «ԳԼՈՄՄԱ» ԱԿ | | | | | ԹԵՐԹ | ՇԿ - 1 |